ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Երևանի Փոխ-Թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով հաստատուեցան Թեմական դպրանոցի Հոգաբարձութեան պաշտօնի մէջ՝ պ. պ. երդուեալ հաւ. Գրիգոր Տէր Խաչատրեան, Յովհաննէս Մելիքեան, Գեղէօն Ահարոնեան, բժ. Խաչատուր Յարութիւնեան, Երդ. հաւ. օգնակ. Աղէքսանդր Պարոնեան, Պօղոս Կանդուրալեան և բժ. Յովհաննէս Տէր Միքայէլեան, իսկ անձնափոխանորդ՝ բժ. Արմենակ Մելիքեան։ 2 Յուլիսի թ. 3.8.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօդի անդամ Տ. Մատթէոս վարդապետի անունով, որով կարգուեց Հայրապետական Դիւանի խորհրդի անդամ։ 2 Յուլիսի, թ. 400.

Կոնդակ Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի անունով, որով, Սանասարեան Վարժարանի Խնամակալութեան պաշտօնական դիմումի հիման վրայ, հաւանութիւն տուեց փոխադրել վարժարանը Կարին քաղաքից՝ Սեբաստիա։ 3 Յուլիսի, թ. 403.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով ծանուցանելով, թէ Ս. Միւռոնի օրհնութիւնը պիտի կատարուի առաջիկայ սեպտեմբերի 30-ին, Վարագայ Ս. Խաչի տօնին, առաջադրուեց շրջաբերականներով տեղեկութիւն տալ թէ Ռուսահայոց Թեմական Առաջնորդներին և թէ Եւրոպայի, Ամերիկայի, Ատրպատականի, Պարսկա-Հնդկաստանի առաջնորդներին ու Կ. Պոլսի և Երուսաղէմի Հայոց Ամենապատիւ Պատրիարքներին։ 3 Յուլիսի, թ. 404.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօդի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով կարգուեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Վերանորոգութեան Յանձնաժողովի Նախագահ։ 5 Յուլիսի, թ. 407.

Կոնդակ Տ. Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, Բագրատ, Մու-

շէ, Մատթէոս, Բարգէն, Մեսրոպ Մաքսուդեան վարդապետների և Դ. ձեմարանի ուսուցիչներ՝ Գուրգէն Էղիլեանի և Գէորգ Ալթունեանի անունով, որով կարգուեցան Մայր Աթոռի Ուսումնարանական Յանձնաժողովի անդամներ, կից Նորին Ս. Օծութեան Դիւանին։ 5. Յուլիսի, թ. 543.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետի անունով, որով կարգուեց Հայրապետական Դիւանի խորհրդի անդամ։ 5. Յուլիսի, թ. 544.

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանի՝ նորա բաղմամեայ արդիւնաւոր ծառայութեան համար։ 9 Յուլիսի, թ. 546.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով. որով առաջադրուեց կարգադրել պարտաւորական դարձնել քահանայացուների համար հայկական ձայնագրութիւն և պահանջել վիայական այդ առթիւ։ 10 Յուլիսի, թ. 568.

Կոնդակ Եւրոպայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Գէորգ եպիս. Իւթուճեանի անունով, որով կարգուեց Ամերիկայի թեմի ժամանակաւոր Լիազօր Հովիւ և յանձնարարուեց քննել ու կարգաւորել այդ թեմի եկեղեցական վարչական գործերը և արդիւնքի մասին մանրամասնաբար զեկուցանել Նորին Սրբութեան ի տեղեկութիւն։ 11 Յուլիսի, թ. 595.

Գրութիւն Դիւանի Վրաստանի թեմի ժամանակաւոր Կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց ներկայացնել Նորին Ս. Օծութեան Տփխիսի Մարիամեան-Յովհաննեան Դպրոցի հոգաբարձական ընտրութեան ամբողջ գործը։ 21 Յուլիսի, թ. 614.

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց Երևանի Կոնսիստորիային՝ ի նկատի ունենալով հանգուցեալ Կարապետ եպիսկոպոս Այվազեանի քրոջ՝ Մարիամի թշուառ կացութիւնը, տալ նպաստ թեմական արդիւնքից ամսական վեց ռուբլի։ 21 Յուլիսի, թ. 617.

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին թոյլ տալ

նկարիչ պ. Ստրաումէին քաղել իրեն հարկաւոր տեղեկութիւնները և արտանկարել ձեռագիրներից ծաղկանկարները իւր հակոդութեամբ։ 21 Յուլիսի, թ. 649.

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Աստրախանի թեմի Առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսին կարգադրել ընտրութիւն անել թեմի զանազան տեղերից Ս. Էջմիածնի Գ. Ճեմարան ուղարկելու համար հանդուցեալ Ստեփաննոս և Սարգիս Ջանումեանների անունով 6 սան։ 25 Յուլիսի, թ. 671.

Շրջաբերական կոնդակներ Ռուսաստանի Հայոց Թեմական և Ատրպատականի առաջնորդների և Պարսկա-Հնդկաստանի առաջնորդական Խորհրդարանի անունով, որոնցով առաջադրուեց յայտնել իրենց թեմի բոլոր հայ հոգևորականներին, եկեղեցիների և դպրոցների հոգաբարձական մարմիններին և ուսուցչական խմբերին, որ Հայ տպագրութեան 400-ամեայ և Հայոց տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանը կատարուելու է տարւոյս հոկտեմբերի 13-ին, Ս. Թարգմանչաց տօնին, որի հանդիսակատարութեան մանրամասն ծրագիրը կուղարկուի առանձին։ 29 Յուլիսի, թ։ 675—682.

Նորին Վեհափառութեան մակագրութիւն Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անունով, որով վերստին ամուսնութեան իրաւունք շնորհուեց Հայրապետ Ղարիբեանցին, ի նկատի ունենալով նորա զգաստ և համեստ կենցաղը, ըստ վկայութեան թեմական Հոգևոր Իշխանութեան։ 30 Յուլիսի, թ. 693.

Դիւանի գրութեամբ ուղարկելով Երևանի Փոխ. Թեմական Տ. Խորէն եպիսկոպոսին Մոսկովաբնակ եղբ. Ս. Խ. և Ա. Գէորգեանների ներկայացրած գրութիւնը և նոցա մշակած կանոնները՝ Ադուլիսի շրջանի, Բաղաքիկ գիւղում հիմնուելիք եկեղեցական-ծխական դպրոցին վերաբերեալ, յանձնարարուեց յայտնել իւր կարծիքը, որպէս զի հնարաւոր լինի առաջիկայ 1912/13 ուս. տարուանից Գէորգեան եղբայրների 27 հազար բուբլի նուէրով գործը դնել կանոնաւոր

և յարատև հիմունքների վրայ։ 30 Յուլիսի, թ. 695.

Դիւանի գրութիւն Տ. Ներսէս վարդապետ Տէր Մի-քայէլեանի անունով, որով գոհունակութիւն յայտնուեց նորան և այն անձանց, որոնք յորդորել են Կարապետ աղա Լալայեանին նուիրել Բագուայ Կուլտուրական Միութեան 10,000 ռուբլի։ 30 Յուլիսի, թ. 696.

Կոնդակ Սինոդի անունով, որով առաջադրուեց Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդութիւնից հրաժարուած Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվատեանին անցած յունիսի 1-ից տալ ռոճիկ և սննդադրամ։ 30 Յուլիսի, թ. 714.

Երջաբերական կոնդակներ Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց մատուցանել Նորին Սրբութեան եկեղեցական-ծխական դպրոցների բարոյական-մտաւոր և տնտեսական վիճակի մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ։ 30 Յուլիսի, թ. 715—720.

ՍԻՈԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 392. Յուլիսի 6-ին Սինոդը լսեց Հոգևոր գործերի դեպարտամենտների անցեալ յունիսի 2-ի Թ. 5087 գրութիւնը, որի հետ ուղարկուել է Բարձրագոյն շնորհուած շքանշաններ հետևեալ քահանաներին. Ս. Աննայի 3-րդ աստ. Ախալցխայի Հոգևոր Կառավարութեան անդամ Աբրահամ աւ. քահանայ Ղազարեանին. Ս. Ստանիսլաւի 3-րդ աստ. նոյն կառավարութեան գանձապահ Կարապետ քահ. Տէր Մարտիրոսեանին, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անդամ Զաքարիա քահ. Զարդեղեանին, Դերբենդի Աբրահամ աւ. քահ. Ապանդունեանին, Տփխիսի օրիորդաց 3-րդ գիմնազիայի կրօնուսոյց Յովհաննէս աւ. քահ. Մարտիրոսեանին, Կազգուանի տարրական դպրոցի կրօնուսոյց Մկրտիչ քահ. Տէր Գրիգորեանին և Օլթիի դպրոցի կրօնուսոյց Վարդան քահ. Սաֆարեանին. որոշեց յիշեալ շքանշանները ուղարկել Կոնսիստորիաներին յանձնելու ըստ պատկանելեաց։